ՅԱՒԵԼՈՒԱԾ

Քանի մը բառեր պիտի լրացնեն հոս մեր յիշատակած կահուց ցուցակը, եւ են հետեւեալները։

Քանդուկ։ Շտեմարանի անօթներէն էր, ծագած պրս. քենտուքէն, որ կը մեկնուի կարասի նման մեծ ման՝ արմտեաց պահարան (Գ. Դպ.)։ *Եւ արդարեւ հայ կոչումն ալ նոյն պաշտօնն ունէր՝ ըստ Խորենացւոյն, թէ ի Բիւրթանիա սպիտակ հող մանրելով՝ կը ցանեն «ի քանդուկս ի վերայ ցորենոյ», որպէս զի ճճի չուտէ* (600)։

Խաւեակ։ Եսայեայ վկայութեան մէջ՝ թէ «Եղիցի անդ սափոր մի» (Ե, 10), *Ոսկեբերանի թարգմանիչը կ'ըսէ՝ «խաւեակ մի»* (Ոսկ. Ես. 52)։ *Բնագիրն է երկու տեղւոյն՝ մէջ ալ* κεράμιον, *որ է ըստ տառին կաւեղէն. եւ «խաւեակն» եթէ յատուկ անօթ մը չէ, գուցէ կարդալու է կաւեակ կամ խեցեակ։*

Կոտիկ։ Պապ՝ Ս. Ներսեսի «անապակ մատուցանէր... ղեղ մահու ընդ կոտիկն խառնեալ» (Փաւս. 216)։ *Հայկազեանն*